Փողի հոգեբանությունը

MORGAN HOUSEL

The Psychology of Money

TIMELESS LESSONS ON WEALTH, GREED, AND HAPPINESS

ՄՈՐԳԱՆ ՀԱՈՒՋԵԼ

Փողի հոգեբանությունը

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ, ԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԵՐՋ ԴԱՍԵՐ

Թարգմանությունն անգլերենից՝
Անուշ Սեդրակյանի

new

ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 159.923:336
ԳՄԴ 88.3+65.26
Հ 442

Հաուզել Մորգան
Հ 442 Փողի հոգեբանությունը: Երջանկության, ագահության և հարստության անվերջ դասեր / Մորգան Հաուզել.- Եր.: Newmag, 2025.- 352 էջ:

Ինչո՞ւ են ֆինանսապես կրթված մարդիկ երբեմն աղքատանում, իսկ շարքային աշխատողները՝ միլիոնատերեր դառնում: Ինչպե՞ս է հնարավոր լինել բարձրագույն կրթությամբ ներդրող, բայց, փողի հետ գործ ունենալիս, անհաջողակ: Ֆինանսական հաջողությունը սոսկ գիտելիքի արդյունք չէ: Այն ավելի խորքային է և կապված է մարդու վարքագծի, որոշումների, բնավորության ու ընտանեկան պատմության հետ: Մորգան Հաուզելը ներկայացնում է փողի վերաբերյալ մեր վարքի լավագույն ուղեցույցը:

«Փողի հոգեբանությունը» գիրքը կօգնի ավելի լավ հասկանալ, թե ինչպես պետք է մտածել փողի մասին, ինչպես խուսափել ֆինանսական թակարդներից և ինչպես կայացնել կայուն ու խելամիտ որոշումներ՝ բյուջեից կամ մասնագիտական փորձից անկախ:

ՀՏԴ 159.923:336
ԳՄԴ 88.3+65.26

Գրքի գլխավոր գործընկեր՝
Էփրիքոթ Կապիտալ ՓԲԸ
apricotcapital.am

apricot.

ISBN 978-9939-967-92-9
First published in 2020.
Copyright © Morgan Housel
Originally published in the UK by Harriman House Ltd in 2020,
www.harriman-house.com

Մորգան Հաուզել «Փողի հոգեբանությունը» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակման հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Harriman House ընկերության հետ կնքած պայմանագրով:

Ծնողներիս, որ կյանքի դասեր են տվել ինձ։
Գրետխենին, որն առաջնորդել է ինձ։
Մայլզին ու Ռիզին, որ ոգեշնչել են ինձ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն
Երկրագնդի ամենամեծ շոուն 11
1. Ոչ ոք խելագար չէ 23
2. Հաջողություն և ռիսկ 43
3. Ոչինչ բավարար չէ 61
4. Համակցում և կուտակում 75
5. Հարուստ դառնա՞լ, թե՞ հարուստ մնալ 87
6. Արծի՞վ, թե՞ գիր. մեկ է, հաղթել ես 105
7. Ազատություն 123
8. Մարդը և մեքենայի պարադոքսը 135
9. Իրական հարստությունը տեսանելի չէ 141
10. Փող խնայեք 149
11. Ողջամիտն առավել է ռացիոնալից 163
12. Անակնկալ 177
13. Սխալվելու հնարավորություն 195
14. Դուք փոխվելու եք 213
15. Ոչինչ ձրի չէ 223
16. Ես ու դու 237
17. Հոռետեսության գայթակղությունները 251
18. Երբ պատրաստ ես հավատալ ամեն ինչի 271
19. Հիմա՝ բոլորս միասին 291
20. Խոստովանություն 301

Հետգրություն 315

Ծանոթագրություններ 343

Երախտագիտության խոսք 349

Հանճար կարելի է համարել այն մարդուն, որը կարող է իր գործն անել այն պահին, երբ մյուսները գլուխները կորցրել են:

Նապոլեոն

Աշխարհը լեցուն է բացահայտ բաներով, որոնք ոչ ոք երբեք չի նկատում:

Շերլոկ Հոլմս

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկրագնդի ամենամեծ շոուն

Համալսարանում ուսանելիս աշխատում էի Լոս Անջելեսի մի բարձրակարգ հյուրանոցում:

Մի ծրագրավորող հաճախ էր գալիս մեր հյուրանոց: Նա հանճարեղ մասնագետ էր. 20 տարեկանում նախագծել և պատենտավորել էր Wi-fi սարքերի առանցքային ծրագրերից մեկը և հասել մեծագույն հաջողության:

Սակայն փողի հետ նրա հարաբերությունները կարելի էր բնութագրել որպես անվստահ վարքի և մանկամտության անբացատրելի համակցություն:

Նա գրպաններում պահում էր 100-դոլարանոցների տրցակներ, որոնք բոլորին ցուցադրում էր անկախ նրանից՝ այդ մարդիկ ցանկանո՞ւմ էին տեսնել այդ փողը, թե՞ ոչ: Նա բացահայտորեն պարծենում էր իր հարստությամբ, հաճախ դա անում էր հարբած և գրեթե միշտ անառիթ:

Մի օր նա մեր աշխատողին մի քանի հազար դոլար տվեց և պատվիրեց մոտակա ոսկու խանութից գնել 1000 դոլարի ոսկեդրամներ:

Մի ժամ անց այդ ծրագրավորողն իր ընկերների հետ հայտնվեց Խաղաղ օվկիանոսին նայող նավամատույցի վրա:

Նրանք սկսեցին ոսկեդրամները նետել ծովը՝ ծիծաղելով և համեմատելով, թե ում ոսկեդրամն է ավելի հեռու թռչում: Նրանք այդպես զվարճանում էին:

Մի քանի օր անց նա կոտրեց ռեստորանի ջահը: Կառավարիչն ասաց, որ այդ ջահն արժի 500 դոլար, և վնասը պետք է հատուցել:

— Դու 500 դոլա՞ր ես ուզում ինձնից,– հարցրեց նա՝ ասես չհավատալով իր լսածին, ու գրպանից հանեց թղթադրամների մի կապոց,– ահա քեզ 5000 դոլար: Հիմա չքվիր աչքիցս ու այլևս չհամարձակվես այդպես վիրավորել ինձ:

Ձեզ կարող է հետաքրքրել, թե այդ պահվածքով նա ինչքան կարող էր շարունակել իր գործունեությունը: Ասեմ. այդ ամենը երկար չտևեց: Տարիներ անց իմացա, որ նա սնանկացել է:

Այս գիրքը հիմնականում այն մասին է, որ փող ունենալը բնավ կապ չունի ձեր արտակարգ ունակությունների հետ: Բայց հարստությունն ուղղակիորեն կապված է փողի հանդեպ ձեր վերաբերմունքի հետ: Այդ վերաբերմունքը դժբախտաբար դժվար է սովորեցնել նույնիսկ շատ խելացի մարդկանց:

Իր հույզերը չկառավարող հանճարը կարող է կործանել իր ֆինանսական ապագան: Հակառակ պնդումը նույնպես ճշմարիտ է. ֆինանսական կրթություն չունեցող սովորական մարդիկ կարող են ֆինանսական հաջողությունների հասնել, եթե ունեն վարքագծային որոշակի հմտություններ, որոնք որևէ առնչություն չունեն խելամտության ընդունված չափանիշների հետ:

Wikipedia-ում մի բառահոդված շատ եմ հավանում: Այն սկսվում է այսպես. «Ռոնալդ Ջեյմս Ռիդն ամերիկացի բարերար էր, ներդրող, դռնապան և բենզակայանի աշխատակից»:

Ռոնալդ Ռիդը ծնվել էր Վերմոնտ գավառական քաղաքում: Նա ընտանիքում առաջինն ավարտեց ավագ դպրոցը: Առավել տպավորիչ է փաստը, որ նա ստիպված էր ամեն օր ոտքով գնալ վարժարան ու վերադառնալ:

Ռոնալդ Ռիդին ճանաչողները դժվար թե այլ հիշարժան դեպքեր հիշեին նրա կյանքից: Ռիդի հետագա հաջողություններն առավել քան համեստ էին:

Բենզակայանում Ռիդը մեքենաներ էր սպասարկում 25 տարի շարունակ, JCPenney հաստատության հատակն էր ավլում 17 տարի անընդմեջ: 38 տարեկանում Ռիդը երկսենյականոց բնակարան առավ 12 հազար դոլարով և այնտեղ ապրեց մինչև կյանքի վերջը: 50 տարեկան էր, երբ նրա կինը մահացավ: Ռիդն այլևս չամուսնացավ: Ըստ ընկերոջ հուշերի՝ ազատ ժամանակ նա սիրում էր փայտ կոտրել:

Ռիդը մահացավ 94 տարեկանում, և գյուղական համեստ դռնապանի անունը մահից հետո հայտնվեց միջազգային մամուլի վերնագրերում:

2014-ին մահացավ 2,813,503 ամերիկացի, որոնցից ընդամենը 4000-ն ունեին 8 միլիոն դոլարի կապիտալ: Ռիդը նրանցից մեկն էր:

Նա 2 միլիոն էր կտակել իր խորթ զավակներին և մոտ 6 միլիոն՝ տեղի հիվանդանոցին և գրադարանին:

Ռիդին ճանաչողներն ապշած էին. նրան որտեղի՞ց այդքան փող:

Պարզվեց, որ ոչ մի գաղտնիք էլ չկա: Ո՛չ խոշոր շահում էր, ո՛չ էլ անակնկալ ժառանգություն: Ռիդը, մի փոքր գումար հետ գցելով, ներդրում էր կատարել ճանաչված և շահութաբեր ընկերության արժեթղթերում: Հետո տասնյակ տարիներ սպասել էր, մինչև գումարը կուտակվի, բազմապատկվի և հասնի 8 միլիոն դոլարի:

Ահա այսպիսի մի ուղի՝ դռնապանից մինչև բարերար:

Ռիդի մահից ամիսներ առաջ մեկ այլ մարդու անուն հայտնվեց մամուլում:

Ի տարբերություն Ռոնալդ Ռիդի, Ռիչարդ Ֆասքոնը հասել էր ամեն ինչի: Նա կրթություն էր ստացել Հարվարդում, ստացել մագիստրոսի աստիճան, դարձել Merrill Lynch ընկերության գործադիր կառավարիչը: Ֆասքոնը շատ մեծ հաջողություններ էր գրանցել ֆինանսական ոլորտում, 40 տարեկանում անցել էր թոշակի ու դարձել բարերար: Merrill Lynch-ի գլխավոր կառավարիչը գովում էր նրա «գիտելիքը բիզնես ոլորտում, կառավարման հմտությունները, առողջ դատողությունը և մարդկային բարձր կերպարը»[1]: Crain's բիզնես ամսագիրը նրան ընդգրկեց «40 տարեկանից ցածր 40 անձ» հայտնի գործարարների ցուցակում[2]:

Բայց մի օր ամեն ինչ փուլ եկավ ճիշտ այնպես, ինչպես ոսկեդրամները ջուրը նետած ծրագրավորողի կյանքում:

Ֆասքոնը 2000-ականներին մեծ վարկ վերցրեց, որ ընդլայնի 1700 քմ առանձնատունը Գրինվիչում, Կոնեկտիկուտ նահանգում: Այս տունն ուներ 11 լոգասենյակ, 2 վերե-

լակ, 2 լողավազան, 7 ավտոտնակ: Տան ամսական ծախսը 90,000 դոլար էր:

2008-ին երկիրը ցնցվեց ֆինանսական ճգնաժամից:

Այն, իհարկե, հարվածեց բոլորի ֆինանսական գործերին, բայց Ֆասքոնին ոչնչացրեց լիովին: Մեծաքանակ պարտքերի պատճառով նա սնանկացավ: «Այս պահին եկամուտ չունեմ»,– 2008-ին ասաց սնանկության գործով դատավորին:

Սկզբում առգրավեցին նրա տունը Փալմ Բիչում:

2014-ին հերթը հասավ Գրինվիչի կալվածքին:

Դրանից ընդամենը հինգ ամիս առաջ Ռոնալդ Ռիդը հսկայական գումար էր տրամադրել բարեգործությանը:

Հյուրերի հուշերի համաձայն՝ Ռիչարդ Ֆասքոնի «լողավազանի թափանցիկ տանիքի վրա շքեղ սրահներ էին պարահանդեսների և խրախճանքների համար»: Այդ տունը պարտքերի մարման աճուրդում վաճառվեց շուկայական գնից 75 տոկոս ցածր գնով[3]:

Ռոնալդ Ռիդը ժուժկալ էր, Ռիչարդ Ֆասքոնը՝ անհագ:

Եվ այդ հատկանիշները բավական էին՝ նրանց միջև եղած՝ կրթության և փորձառության հսկայական տարբերությունը չեզոքացնելու համար:

Այս պատմության դասն այն չէ, որ պետք է նմանվել Ռոնալդին, ոչ թե Ռիչարդին, թեպետ սա էլ վատ խորհուրդ չէ:

Այս պատմությունները բացառիկ են միայն այն պատճառով, որ կապված են փողի հետ:

Որևէ այլ գործունեության ոլորտում կարո՞ղ է գտնվել մեկը, որն առանց գիտական աստիճանի և փորձի, առանց պատրաստվածության ու համապատասխան կապերի գերազանցի մեկին, որն ունի բոլոր այդ առավելությունները:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark